չլինէի, աւելի լաւ էր։

— Բայց ի՞նչ եղաւ վերջը։

— Վերջը եղաւ տխուր եւ զվիճակս քարուքանդ... Չեմ ուզիմ գլուխդ ձեր մաշել, մանաւանդ ունիք տաքութիւն, որ ասեն սատըլ-ճամ...

— Դէ, ոչինչ, պատմեցէք։

— Իտալայք, մայր, մարդիկ են սարլին, անսիրտ եւ անօրէն...

— Ամէն տեսակն էլ կայ. վատ մարդկանց հետ չէք գործ ունեցել,— հանդստացնում եմ նրան։

Բժի տակ ինչ որ երգ է մրմռում։

— Հնդկաստան բազում երգիչներ կան, բանաստեղծներ, որ ունին շատ գեղեցիկ խօսքեր։ Երգեր զանազան լեզուներով, բայց մանաւանդ Բենգալի։ Եւ աս է մէկը...

Հնդկերէն, չեչտերի վրայ ցատկելով, երգում է։

— Թարգմանեմ...

Աչքերը կէս փակում է, գլուխը վեր տընկում ու՝

Դու կ՚երթաս, կ՚երթաս, կ՚երթաս.
Անտառում արեւը ծով է փռել
Տերեւները խշխշ կ՚անեն, խշխշ կ՚անեն.
Դու լսես թռչնայք ծլվծլվ կ՚անեն, ծլվծլվ, ծլվծլվ...
Ոտքդ կպչի գքարն՝ արիւնէ գքիթ
Եւ չկա՛ն թռչնայք ծլվծլվ անող
Եւ կորչի զերազն, այլ մնայ ցաւ։

— Չեմ կարի հայաւոր ասել, բայց դու զգաս անշուշտ։

— Զգում եմ։

— Հայ սիրտն զրանն ամենայն զգայ։

Շարունակում է։

— Եղեւ, ինչպէս ասի Խորենացի, գ՚ողբամ մեծ։ Պապագայք՝ վանդակներում դարսել էի վերը, իսկ կօկօյք՝ ներսը, նաւի տակը։ Մեկնեցանք Կալկուտայից ողջ եւ առողջ։ Տաք էր սաստիկ եւ լաւ՝ թռչնոց համար։ Կապտըն կուզայր, կը նայէր, ուսխս ձեռքով խփէյր, հիանար։ Հիանային նաեւ նաւաստիներ։ Թռչնայք ոմանք երգէին, դայլայլ ասէին, ինչպէս անտառում, որ է իրենց իսկական հայրենիք։ Իսկ ես տայի կուտ, նայէի, մաքրէի եւ ազատ ժամանակ մտածէի վերադարձիս եւ օդլշադին, զոր պիտի առնէի եւ կեանքիս բարեպաշտ, որ պիտի ապրէի։ Նկատէի սակայն, որ նաւաստիներն այդ նայէին չափազանց հետաքրքրութեամբ. նայէին ինձ եւ ծիծաղէին։ Կիզիչ, անշնչելի օդ էր, մերկանային եւ գնային նաւի տակը պառկէին։ Աչքեր ունէին լիրբ եւ ոչ համեստ. ամէն րոպէ, երբ ուզէի ջուր մաքուր՝ ուզէին փող եւ խօսէին լեզու մի, որ չհասկանամ։ Հասանք Մադրաս, Կօլոմբօ՝ հանդիստ։ Նաւը կ՚երթայր դանդաղ եւ շատ կեղտոտ։ Չմաքրեցին ոչինչ եւ ամենայն գիքիլ թափուած էր գետին եւ դեռ մեղադրեցին ինձ, որ պապագայք ծռտեն։ Հարցնեմ քեզ, մայր, եթէ պապագայք չծռտեն, ի՞նչ անուն։ Բայց թողնենք այդ։ Կօլոմբոյից Ադէն, բարձրացաւ մի քամի խիստ։ Շուտ դամիշով կապեցի վանդակները զմիմեանց, որովհետեւ նաւը բալաճա՝ պարեր ինչպէս կեղեւ ընկուզոյ եւ ալիքներ մեծ կատաղէին։ Տեսամ, որ թռչուններ իմ տառապեն։ Կուտ չուտեն, չերգեն. աջ ու ձախ նետուեն, իսկ ոմանք աչքերը կէս փակեն նստեն։ Խօսեցայ մի նաւաստիի հետ, որ հասկանար ինգլիշ. ասէր կապտընին, որ պէտք է վանդակներ տանել վար, վասնզի թռչնայք չդիմանան տարբերաց կատաղութեան եւ սիրտ իմ յուզուի։

Ակնոցները մաքրում է։ Ձեռքը տանում է սրտին։

— Եւ սիրտ իմ յուզուի։

— Դէ, բնական է, խեղճ թռչունները։

— Այո՛, եւ փող իմ կորչի։

Վեր է կենում ոտքի։ Ձեռքերը ծալում է կրծքին։

— Եւ ի՞նչ ուզէք, որ պատասխանի կապտըն։

— Ի՞նչ։

— Ուզիմ, ասի, երկու պապագայներ, նա որ կանանչ թեւեր եւ կարմիր գլուխ ունի եւ նա, որ պոչի վրայ խալեր ունի սեւ։ Ամենագեղեցի՛կ իմ ապրանքներ որոնց վրայ յոյս մեծ դրած եմ եւ որոնք խիստ թանգ են։

— Տուի՞ք։

— Տուի՞մ... տուի՞մ... Երբե՛ք։ Պատասխանեցի, չե՛մ տար։ Եթէ չես տար, վանդակներ կը մնան վերը, ասացին։

Նստում է։

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան